

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԹԱԹԱՐԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. — Ռ՞վ գրած է Թաթարաց Պատմութեան հեղինակը ինքզինքը կը ներկայացնէ իբրեւ աշակերտ Վանական Վարդապետի. «Ընդ աւուրս ընդ այսօսիկ փոխեցաւ ի Քրիստոս աւագ և փառաւոր Վարդապետն մեր Վանականն, և սուգ մեծ եթող մեզ, և ոչ թէ միայն մեզ աշակերտեցոյց նմայ, այլ և ամենայն աշխարհիս . . . » (Տպ. Երուսաղէմի, էջ 33: Զեռ. Թ. 32, էջ 551-2):

Իրեն ծանօթ են Վանականի աշակերտներէն չորս հոգի, որոնց գործունէութիւնը մեծ գովեստով կը յիշէ. «Նոյնպէս և գովելի աշակերտքն իւր Վարդան և Կիւրակոս, Առաքեալն և Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհս արեւելից՝ լուսաւորեցին կենարար վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ: Այլ և բազում որդիս ի փառս ածին՝ ձրի բաշխելով զտիրական և զխաչանիչ գաւաղանն, նմանեալ փառաւոր Վարդապետին իւրեանց . . . » (Տպ. Եւէմի., էջ 22-3):

2. — Ի՞նչ էր հեղինակին անունը. — Եւրեք անուններ գրուած են հրապարակ իբրեւ հեղինակ Թաթարաց Պատմութեան. ա, Վարդան Պատմիչ. բ, Մաղաքիա Աբեղայ. գ, Գրիգոր Աբեղայ Ակներցի: Քննենք ասոնցմէ իւրաքանչիւրը զատկատ:

Ա. — Վարդան Պատմիչ. — Երուսաղէմեան տպագրութեան ճակատը գրուած է «Պատմութիւն Թաթարաց Վարդանայ Պատմիչ», իսկ Յառաջարանին մէջ փաստարկուած է սա ձևով. — Եւ գրեալ է Վարդանայ Պատմիչ յաշակերտացն Վանականայ Վարդապետի ի ԺԳ դարու, ի 1247, և ընդօրինակեալ ի 1272: . . . Օրինակս չունի առանձին յիշատակարան զգրողէն, սակայն ի լուսանցս օրինակիս ուրեք ուրեք տեսանի գրեալ նովին ձեռագրով «ողորմեա՛ Տէր, Վարդանայ ծառայի քո»: Նա ևս՝ կից է օրինակս Միխայէլի Ասորեոց Կաթուղիկոսի Ժամանակագրութեանն, որ յայտնի թարգ-

մանութիւն է նորին Վարդանայ ի յիշատակարանին ծանուցեալ: Եւ լեզու և ընթացք պատմութեանն իսկ վկային զսա նորին լինել հեղինակութիւն:

Այստեղ հինգ կէտեր մատնանշուած են իբրեւ փաստ հաստատուելու համար թէ հեղինակը Վարդան Պատմիչն է: Այդ հինգ կէտերն են.

1. — Հեղինակը աշակերտ է Վանականի:

2. — Լուսանցքի վրայ յիշուած է Վարդան անունը, նոյն ձեռագրով:

3. — Թաթարաց Պատմութիւնը կից է Միխ. Ասորիի Ժամանակագրութեան՝ որ թարգմանուած է Վարդան Վարդապետի կողմէ:

4. — Լեզուի նմանութիւն:

5. — Պատմութեան ընթացքի նմանութիւն:

Քննենք այս փաստարկութիւնները մի առ մի:

1. — Հեղինակը աշակերտ է Վանականին, այո՛, բայց Վարդանէն տարբեր մէկը, ինչպէս կը տեսնուի վերեւ մէջ բերուած վկայութենէն (Տպ. Եւէմի., էջ 22-3):

2. — Լուսանցքի վրայ յիշուող Վարդանը կը գանազանուի յիշատակարաններուն մէջ տեսնուող Վարդան փակակալէն «միւս» անորոշ ածականով: Լուսանցքային այդ յիշատակութիւնները երբեմն բուն գրչի ձեռագրով են և երբեմն տարբեր գրչով և կը գտնուին Միխայէլի Ժամանակագրութեան լուսանցքներուն վրայ միայն, բայց ոչ Թաթարաց Պատմութեան:

3. — Թաթարաց Պատմութիւնը կցուած է Միխայէլի Ժամանակագրութեան ոչ թէ իբրեւ Վարդան Պատմիչի հեղինակութիւն, այլ լեցնելու համար քառասուն և չորսամեայ այն միջոցը՝ որ անցած էր Միխայէլի Ժամանակագրութեան հայրէն թարգմանութեան ձգած թուականէն (1229) մինչև Երուսաղէմի Թ. 32 ձեռագրի ընդօրինակութեան տարին (1273):

4. — Լեզուի նմանութեան վկայութիւնը հիմնաւորուած է, հետեւաբար արժէք չունի:

5. — Պատմութեան ընթացքին նոյնութեան փաստը ևս չի համապատասխաներ իրողութեան, հետեւաբար կը մնայ անարժէք:

Եզրակացութիւն. Թաթարաց Պատմութեան հեղինակը Վարդան Պատմիչը չէ:

Վարդանի վերագրուած հեղինակութեան սխալ կարծիքին դէմ տես նաեւ Հ. Հ. Սուկեան, Յովհաննէս Վանկան և իւր Դպրոցը, Վիեննա, 1922, էջ 114-122:

Բ. — Մաղափիա Աբեղայ. — Այս անունը գրողուած է Նետողաց Ազգին Պատմութեան այն տպագրութեան ճակատը՝ զոր ի լոյս ընծայած է Բերովըէ Պատկանեան, 1870ին, Ս. Պետերբուրգ: Հրատարակիչը հետեւած է այն «բազմադարեան աւանդութեան» որոյ ստուգութեան վրայ ամենեւին պատճառ չկայ կասկածելու», ինչպէս կը գրէր 20 տարի ետք Հ. Ղ. Յովնանեան (Հանգ. Ամս., 1890, էջ 35): Եւ սակայն Տ. Հ. Թ. Սաւալանեանց ստիպուեցաւ յայտարարելու թէ «Մաղափիա Աբեղայ չէ հեղինակ՝ Պատմութիւն Թաթարաց Գրքին» (Ծաղիկ Լրագիր, Կ. Պոլիս, 1891, Դեկտ. 21): Սաւալանեանցի տեսութեամբ «յիշեալ Պատմութեան ձեռագրաց ոմանց մէջ Մաղափիա անունը յիշատակուած տեսնելով», Չափեան և ուրիշներ կարծած են թէ ան է հեղինակը: Ծիշդ է Սաւալանեանցի տեսութիւնը:

Ս. Աթոռոյս Թ. 960 Ձեռագրին մէջ Ասորոց Միխայէլ Պատրիարքին Յաղագս Քահանայութեան կոչուած գրութեան վերջը (էջ 524) կայ սա յիշատակարանը. «Բազմադիմի է շնորհք մարդասիրութեան . . . Թագաւորութիւն անանց և յաւիտենական» (Հմմտ. Սիւրմէեան, Յուցակ Ձեռ. Երուսաղէմի, Ա. Հատոր, Վենետիկ, 1948, էջ 143): «Արդ ես նուազստ յամենայնի Մաղափիա սպասաւոր բանի, գրեցի զՊատմութիւն Տն. Միխայելի Պատրիարքի Ասորոց, զոր է գրել ծայրաքաղ յԱղամայ մինչև ի ծնունդն Քոի. Այ. մերոյ, և ի ծննդեանէն Քի. մինչև ի Հայոց թվականն ՈՂ և Ը, և զՊատմութիւն Տաթարին, այսինքն Ազգին Նետողաց ԽԴ ամաց գործելոց մինչև առ մեզ, վասն իմանալոյ զանցաւորութիւն սուտ և պատրող կենցաղոյս, ընթերցողացդ և լսողացդ . . . սուտ և ոչինչ, խաբող և անցաւոր» (Հմմտ. նոյն, անդ): Ընդգծուած բառերուն տեղ հնագոյն յիշատակարանը ունի «Ստեփանոս հայր Ականց Անապատիս ետու գրել»: Ստեփանոսի փոխարէն Մաղափիա գրած է իր անունը և կարծուած հեղինակ Թաթարաց Պատմութեան,

որ այս Թ. 960 Ձեռագրին մէջ անմիջապէս կը յաջորդէ վերագրեալ յիշատակարանին սա վերնագրով. «Պատմութիւն Վասն Ազգին Նետողաց, թէ ուտի, կամ յորմէ ցեղէ աճեցին, և տիրեցին բազում աշխարհաց և զաւառաց» (էջ 525ա):

Յիշատակարանին մէջ կատարուած այդ կարեւոր փոփոխութեան արդարացումը սակայն չունինք ներկայ ձեռագրին մէջ. քանի որ Միխայէլ Ասորիի Պատմութիւնը չկայ հոն, այլ կայ միայն Յաղագս Քահանայութեան գրուածքը:

Ձեռագիրս օրինակուած է ձեռամբ Բարսեղի, որ փոքր յիշատակարան մը ունի հատորիս առաջին մասը կազմող Ռեկրատայ Եկեղեցական Պատմութեան վերջը. «Գրեցաւ Պատմութիւնս ձեռամբ անարժան և սուտանուն Բարսեղի, թվին ՌԻԱ [= 1602], վայելումն Մաղափիա Վարդապետին» (էջ 284բ):

Եզրակացութիւն. Թաթարաց Պատմութեան հեղինակը չէ Մաղափիա Աբեղայ:

Գ. — Գրիգոր Ակնեցի. — Թաթարաց Պատմութիւնը Գրիգոր Ակնեցիի հեղինակութիւն համարած է սկիզբէն Տ. Հ. Թ. Սաւալանեանց. այսպէս Թ. 32 Ձեռագրի նկարագրութեան մէջ կ'ըսէ. «Ի վերջ գրոյս Միխայելի նոյն իսկ գրիչն Գրիգոր, որպէս երևի՝ յաւելու զշարունակութիւն պատմութեան սկսեալ ի 678 թուականէն Հայոց, հասանէ մինչև ցամաք 722, այսինքն զանցս ամաց 44 ից» (էջ 40): Դարձեալ Թ. 960 Ձեռագրի բովանդակութիւնը տալու առթիւ կը գրէ. «Պատմութիւն Թաթարաց՝ արարեալ Գր. Վարդապետի Ականց անապատի իբր շարունակութիւն գրոց Միխայէլի» (էջ 506): Իսկ հեղինակներու տոմարին մէջ սապէս արձանագրած է. «Գրիգոր Վարդ. Ականց Անապատի Պատմութիւն Թաթարաց այն է որ յիշատակի սովորաբար յանուն Մաղափիայ արեղայի» (էջ 31):

Աւելի ետքը հրատարակուած յոգուածի մը մէջ (Ծաղիկ Լրագիր, Կ. Պոլիս, 1891, Դեկտ. 21) սապէս փաստարկած է ի նպաստ իր տեսութեան, մէջ բերելով Գրիգոր գրչի հետեւեալ յիշատակարանը. «Այժմ է թիւս Հայոց 216, որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառապեալ Գրիգորոյ. զոր կամօքն Աստուծոյ գրեցուք և մեք զպակասութիւն

սորա ամաց քառասուն և չորից» . . . Սոյն վաւերական տեղեկութիւնները կարգացողն առանց երկմտելու 44 ամաց Պատմութիւնն թաթարաց՝ Գրիգորի պիտի ընծայէ, և ոչ ուրիշի կամ Մաղաքիայի, ինչպէս սխալ աւանդութիւն մը տարածուած է: Գրեցում կ'ըսէ և ոչ օրինակեցուք, ինչպէս Միխայէլ գրել է ծայրաքաղ յԱղամայ մինչև ի ծնունդն Քրիստոսի . . . Նոյնպէս ինքն ալ գրեցուք կ'ըսէ, այն է պատմեցուք»:

Բայց պէտք է զիտել տալ թէ Միխայէլի Պատմութեան համար ալ երկու սող վերը նոյն յիշատակարանին մէջ գրիչը կ'ըսէ. «գրեցաւ գիրքս ձեռամբ տառապեալ Գրիգորոյ», ուր «գրել»ը յայտնապէս կը նշանակէ ընդօրինակել, ապա թէ ոչ Միխայէլի ժամանակագրութեան հեղինակութիւնն ալ պիտի տրուէր Գրիգորի: Այս պարագան քիչ մը երկմտութիւն կու տայ երկրորդ «գրել»ին պատմել իմաստով գործածուած ըլլալուն մասին:

Թաթարաց Պատմութեան իբրև հեղինակ Գր. Ակներցին կը ճանչնայ՝ նաև Հ. Ն. Ակինեան, նկատելով «զինքը իր առաջին յայտնութեան (1273) իբր 23 տարեկան հասակի մէջ» (Հանդ. Ամս. 1948, էջ 387): Բայց Գր. Ակներցին այդպէս նորատի չի ներկայանար մեզի երբ ձեռագրին յիշատակարաններուն մէջ կը կարդանք իր մասին. «Եւ զիս զտառապեալ գրիչս» (Ձեռ. Ս. Յ. Թ. 32, էջ 313բ), «տառապեալ Գրիգորոյ» (էջ 522բ), «ձեռամբ տառապել գրչի Գրիգորոյ սպասաւորի բանին» (էջ 594բ), և «եղկելի գրիչս Գրիգոր . . . զտառապեալ գրիչս, զի բազում աշխատանաւք և տկար մարմնով գրեցի . . . զի մեք էաք յոյժ տկար և անխել» (էջ 637): Այս ամէնը, մեր կարծիքով, 23 տարեկան երիտասարդի մը չեն պատշաճիր:

Հ. Ակինեան տակաւին կ'աւելցնէ. — Դարձեալ Ստեփանոս վանահօր վկայութիւնը, թէ Գրիգոր գրչի «ետու գրել զՊատմութիւն տեառն Միխայէլի . . . և զՊատմութիւն Տաթարին . . . և՛ ամաց գործելոց մինչև առ մեզ» յայտնաբարբառ կը հաստատեն, թէ այս Թաթարաց Պատմութեան հեղինակն է Գրիգոր Քահանայ, Ակների «սպասաւորն բանին» և Միքայէլի ժամա-

նակագրութեան գրիչը 1273ին (Հանդ. Ամս. 1948, էջ 391):

Այս փաստը արժեւորելու համար սակայն հարկ է Ստեփանոս վանահօր «ետու գրել» բացատրութեամբ Միխայէլի Պատմութեան պարագային հասկնալ «օրինակել տուի», իսկ Թաթարաց Պատմութեան պարագային «հեղինակել տուի»: Իրաւ այսպէս ըսել ուղած է Ստեփանոս վանահայրը, տարակուսելի է շատ: Պարզ հայերէնով, առանց կանխակալ կարծիքի, Ստեփանոս վանահօր «ետու գրել» բացատրութիւնը կը նշանակէ «օրինակել տուի», որով Գրիգոր Ակներցին կ'ըլլայ ինչպէս Միխայէլի Նոյնպէս և Թաթարաց Պատմութեան գրիչը և ոչ թէ հեղինակը:

Հ. Ն. Ակինեանի հետեւելով ամերիկեան հրատարակիչներն ալ Թաթարաց Պատմութեան իբրև հեղինակ ընդունած են Գր. Ակներցին:

Դարձեալ ըստ Հ. Ն. Ակինեանի՝ Գրիգոր «չէ կրած երբ և իցէ վարդապետս պատուանունը» (Հանդ. Ամս. 1948, էջ 388): Նոյն ձեռագրին մէջ սակայն Յովհաննէս գրիչունի փոքր յիշատակարան մը ուր կ'ըսէ. «Յիշեալք զսրբազան եւ զսրբամատոյց զվարդապետս մեր զԳրիգոր, որ բազում աշխատութեամբ եւ ժուժկալութեամբ ի յանգ եհան զատուածային տառս . . . » (էջ 626բ):

Եզրակացութիւն. Գր. Ակներցին իբրև հեղինակ Թաթարաց Պատմութեան կրնայ ընդունուիլ վերապահութեամբ:

3. — Ե՞րբ գրուած է Թաթարաց Պատմութիւնը. — Թաթարաց Պատմութիւնը գրուած է 1273ին, ինչպէս գրքին բովանդակութիւնը և յիշատակարանները կը ցուցնեն յստակօրէն:

4. — Ո՞րք գրուած է Թաթարաց Պատմութիւնը. — Թաթարաց Պատմութիւնը գրուած է Ականց Անապատին մէջ ինչպէս կը հասկցուի հետեւեալ հատուածէն. «Եւ զայս լուեալ մեծախելք թագաւորն Հեթում, բեկաւ սիրտն ի կարի և յանհնարին տրամութենէն որ յանկարծահաս զիպեցաւ. և ոչ կարէր կանգնել զօրտ իւր. մինչ եկն ի սուրբ և ի գերահռչակ ուխտս միանձանց ի յԱկանց Անապատս, և աստ միւրթարեալ սակաւ մի ի ինեղէն եղբարց սուրբ Ուխ-

տիս կենցաղ աւուրսինչ, մինչ ելաւ Թուրքն յերկրէն» (Տպ. Եէմի., էջ 55. Ձեռ. 32, էջ 576-7)։

5. — Ձեռագիրներ. — Թաթարաց Պատմութեան վեց ձեռագիր օրինակներ ծանօթ են ցարդ։

Ա. — Ձեռ. Ս. Յ. Թ. 32. — Յուցակագրուած Արա. Արք. Սիւրբէեանի կողմէ. (Մ. Յուցակ Հայ. Ձեռ. Եէմի., Ա. Հատոր, Վենետիկ, 1948, էջ 141-5), բայց ոչ բուրովին գոհացուցիչ ձեռք. կան բաւական թերիւններ. նշանակենք կարեւորները։

1. — Մոռցուած է էջ 313-ը գրչի յիշատակարանը. «Ջարժանացեալն բարի յիշատակի, զԱճազարդ հայրն Ականց Անապատիս, զՍտեփանոս և զԺնողոսն իւր յիշեսցուք յողորմութիւնն Այ. ո՞վ սբ. դասք ուղղափառաց, ընտրեալ և բանաւոր հաւտք, ճշմարիտ հաւտապետին Քի. Այ. մերոյ, Ընդ սմին և զսիրողն սրբութեան, զմեծահոգի փակակալն Վարդան և զամենայն միակամ եղբայրութիւնս։ Եւ զիս գտառապետ զրիչս յիշեսցիք ի Քս. ո՞վ պատուական լսողք և ընթերցողք»։ Իսկ ստորին լուսանքի վրայ գտնուող միւս Վարդանի յիշատակութիւնը տարբեր մեկնումով և զբաւած է։ Միւս Վարդանը նոյնը չէ փակակալ Վարդանին հետ ինչպէս սխալմամբ կը գրէ Հ. Հ. Ոսկեան (Յովհ. Վանական, 1922, էջ 115-6)։

2. — Կը պակօրի էջ 425-ը գրչի յիշատակարանը. «Քս. Աճ լոյս աշխարհի, քո ամենակարող Աճութեամբդ լուսաւորեալ զհաւր Ստեփաննոսի հոգին և զիւր ննջեցելոցն ի քո սբ. արքայութիւնդ։ Ընդ սմին և զմեղուցեալ զրիչս և զամենայն եղբայրութեանս։ Եւ քեզ փառք յամենայն արարածոց քոց, յաւիտեանս, ամէն»։

3. — Ձէ առնուած էջ 521-2-ի պարունակած նախկին գրչի յիշատակարանը, որ ատենօք տպուած է Միխայէլի Ժամանակագրութեան վերջը, էջ 525-6, Երուսաղէմ, 1871. Իր կարեւորութեան պատճառաւ մէջ կը բերենք ամբողջութեամբ. — «Ի թուականին Հայոց, ՈՀԸ [= 1229], կատարեցաւ աշխարհապատում Պատմութիւնս, Տէր Միխայիլ սբ. Պատրիարքին Ասորոց, զոր ստուգիւ գրեաց ծայրաքաղ առնելով յաստուած աստեղծ մարդոյն Ադամայ սկիւրն

առնելով ասաց մի ըստ միոջէ զկարգ և զԺնունդ և զչինութիւն արարածոցս, զոր նախ քան զՋրհեղեղն աշխարհակործան, և զոր յետոյ Ջրհեղեղին յորդոցն Նոյի շինեալ և աճեալ ըստ հրամանի և ուխտին ամենակալին Այ. որ եղ ընդ նոսայ յետ Ջրհեղեղին։ Եւ ի վերայ այսորիկ, զկարգ և զթիւ թագաւորացն հոռոմոց, և զպարսից, և զկնի պարսից թագաւորութեանն վճարելոյ սկիւրն առնէ թագաւորութեանն արարկաց որ են տաճիկք. և ի կատարածի սոցայ զթուրքաց սուլտանութեանն և զտրեւին բազում աշխարհաց և գաւառաց զոր գեռ այժմ ևս ունին, բռնացեալք ընդդէմ բազում ազգաց և ազանց։ Որ են թիւք ամացն յիւրիցն Ադամայ մինչ և ի ժամանակ կատարելոյ գրոցս ի ձեռն Միխայիլ Ասորոց Պատրիարքի, ամք, վեց հազար, չորս հարիւր, և երեսուն։ Եւ այժմ է թիւս Հայոց 216 [= 1273]։

Որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառապետ Գրիգորոյ, զոր կամաւքն Այ. գրեսցուք և մեք զպակասութիւն սորայ, զամաց, և, և չորից»։

Ասիկա ի՞նչ պրակի վերջին էջն է (522), որուն ստորին լուսանքին վրայ կայ, վերջին անգամ ըլլալով, և տարբեր, նուազ սև մեկնումով, «Տէր Աճ ողորմ[ե]այ Վարդանայ ծառայի քո, յաւուր գալստեան քո ամէն»։

4. — Էջ 594-ը յիշատակարանի սկիզբի կարեւոր մէկ մասը զանց առնուած (Հմմտ. Պատմ. Թաթարաց, Եէմ., 1870, էջ 71), կ'արտագրենք լման. — «Յամի և թն հարիւրերորդի, քսաներորդի, երկրորդի, թուականութիւնս Հայոց, գրեցաւ աշխարհապատում տառս այս հրամանաւ սբ. և փառաւորեալ հաւր Ստեփաննոսի Ականց Անապատիս, այլ և կամակցութեամբ փակակալի Ար. Անապատիս Վարդանայ և ամենայն եղբայրութեանս քահանայից և կրաւնաւորաց, ձեռամբ տառապետ[ա]լ զրիչ Գրիգորոյ, սպասաւորի բանին։

Արդ աղաչեմք զպատահալսդ ի սմայ, որ ոք ընթեռնոյք զաշխարհապատում տառս գայս, յիշեցէք ի Քս. զհայր Ստեփաննոս և զԺնողոսն իւր։ Ընդ սմին և զամենայն եղբայրութիւնս Սրբոյ Անապատիս, զքահանայքս և զկրաւնաւորքս և զմեղուցեալ

գրիչս. զի և դուք որ յիշէք զմեզ, յիշեսցէ և զձեզ Քս. Աճ յողորմութիւն իւր, ամէն»:

5. — Կը պակսի էջ 626թ. Յովհաննէս զրչի յիշատակարանը. «Յիշեսցիք զօրբազան և զօրբաժանոյց զվարդապետ մեր զԳրիգոր, որ բազում աշխատութեամբ և ժուժկալութեամբ ի յանգ եհան զաստուածային տառս: Եւ զիս զծովացեայս մեղաւք զՅովհաննէս սուտանուն կրան: [աւ]որ, որ լի եմ մեղաւք, յիշեսցիք ի Տէր»:

Բ. — Զեո. Ս. Յ. Թ. 960. — Նկարագրուած է Երուսաղէմի ձեռագիրները ցուցակագրող Տ. Հ. Թ. Սաւալանեանցի և Սահակ Կթղ. Սապայեանի կողմէ, երկուքն ալ անտիպ: Յիշատակարանները վերև մէջ բերինք Մաղաքիա Արեղայի վրայ խօսելու ամօրի:

Գ. — Զեո. Վենետիկի, Թ. 781, զըրուած Ռէֆ (1624)ին Կ. Պոլիս, Կից Սոկրատի Պատմութեան: Հ. Ն. Ակինեանի ենթագրութիւնը ուղիղ կը թուի, ըստ որում «Զեռագիրս ըստ ամենայն հաւանականութեան իրեն զաղափար-օրինակ ունեցած է Երուսաղէմի Թ. 960» Զեռագիրը, օրինակուած ի վաղիւն Մաղաքիա Վարդապետի (Հանգ. Ամս., 1948, էջ 397):

Դ. — Զեո. Պետերբուրգի Ակադեմիայի. «զաղափարեալ յամին 1847 ի վանս սրբոյն Ղաղարու և այն՝ բաղմասխալ և թերաբան» (Տպ. Ս. Պետերբուրգ, Ք. Պ., Նախարան: Հանգ. Ամս., 1948, էջ 396):

Ե. — Զեո. Երեանի Մատենադարանի, Թ. 1485, Ժե. դար: Եւ

Զ. — Զեո. Երեանի Մատենադարանի, Թ. 3076, ԺԸ. դար: — Այս երկուքը յիշուած են Հայկազ ժամկոչեանի — «Պատմութիւն Վասն Ազգին Նետողաց» երկի հեղինակը — վերնագրով յօդուածին մէջ, տպուած 1946ին, Երեան: Այս վերջինն ալ կողմնակից եղած է Պատմութեան հեղինակ ճանչնալու Գր. Ակնեցիին (Հմտ. Թ. Պատմութեան Անգլ. թարգմանութիւնը, էջ 15, ծնթ. 28):

6. — Տպագրութիւններ. — Թաթարաց Պատմութիւնը ունեցած է երեք տպագրութիւններ, զժախտաբար երեքն ալ ոչ լիովին զոհացուցիչ:

Ա. — Պատմութիւն Թաթարաց, Վարդանայ Պատմիչ, հանեալ ի ձեռագիր օրի-

նակաց թանգարանի սրբոց Յակոբեանց, յԵրուսաղէմ. 1870, էջք 76: Լեզուական անհամար փոփոխութիւններով և տեղ տեղ վրիպակներով և թերիններով այս հրատարակութիւնը մեծապէս կը տուժէ հարազատութեան տեսակէտէն: Յառաջարանին մէջ ըսուած է թէ «ի գլուխս գլուխս բաժանեալ ըստ զանազանութեան պարագայիցն ի տմա պատմելոյց, տամք ի տպագրութիւն»: Ուրեմն թէ՛ գլուխներու բաժանումները և թէ՛ ամփոփ գլխակարգութիւնները բոլորովին նոր են, հրատարակչին կողմէ շարագրուած: Զուներ ցանկ յատուկ անուանց:

Այս հատորիկին հրատարակիչը Սաւալանեանց չէ: Ինչպէս սխալմամբ կը գրէ Հ. Ն. Ակինեան (Հանգ. Ամս. 1948, էջ 391), այլ «անփորձ և ինքնապարձ համբակ աբեղայ» մը, որուն անունը չէ տուած Սաւալանեանց (Ծագիկ Լրագիր, Կ. Պոլիս, 1891, Դեկտ. 21, էջ 113):

Բ. — Մաղաքիայ Արեղայի Պատմութիւն Վասն Ազգին Նետողաց, ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1870, էջք 64: Հրատարակիչը ինքնին կը խօստովանի թէ «միակ ունէաք առաջի օրինակ հեղինակիս . . . և այն՝ բաղմասխալ և թերաբան»: Դիտելի է սակայն որ այս տպագրութիւնը զերծ է լեզուական այն ոչ յանձնարարիկ վերհագումներէն զոր կատարած է Երուսաղէմի հրատարակիչը: Այս ալ չունի յատուկ անուանց ցանկ, այլ լոկ համառօտ «մեկնութիւն դժուարիմաց բանից»:

Գ. — History of the Nation of the Archers (The Mongols) By Grigor of Akanc, Hitherto ascribed to Malakia the Monk. The Armenian Text Edited with an English Translation and Notes, By Robert P. Blake and Richard N. Frye. — By the Harvard University Press. Cambridge, Massachusetts, 1954. — Դրիգոր Ականեցւոյ Պատմութիւն Ազգին Նետողաց, երբեմն համարեալ Մաղաքիա Արեղայի, էջք 180:

Այս հրատարակութեան մէջ իրրե բնագիր տոնուած է Երուսաղէմի տպագրութիւնը, իսկ Պետերբուրգի տպագրութեան տարբերութիւնները զրուած են լուսանցքի վրայ: Այդ տարբերութիւններէն շատերը կը ներկայացնեն հարազատ ընթերցումը համաձայն մեր Թ. 32 Զեռագրին: Հրատար-

բակիչները կը գրեն. «Where dialectal forms appear in one Ms (especially in V), and where J. has the classical (grabar) form, we adhere to the latter»: Ասոր հակառակ ընթացքն էր որ ճիշդ պիտի ըլլար, վասն զի լեզուական այդ փոփոխութիւնները կատարած է երուսաղէմի հրատարակիչը, խանգարելով բնագրին լեզուական արժէքը: Հրատարակիչները կը խոստովանին նաեւ թէ հայերէն բնագրին մէջ տպագրական շատ մը վրիպակներ սպրդած են. — «Unfortunately, it has not proved possible to make corrections in this Armenian text, in which are many misprints» (էջ 177): Նախընտրելի պիտի ըլլար իբրեւ բնագիր ունենալ երուսաղէմի Թ. 32 ընտիր Զեռագրիւր որպէս հարազատ օրինակը Թաթարաց Պատմութեան: Նկատի ունենալով այս Պատմութեան մեծ արժէքը և ցարդ կատարուած տպագրութեանց մեծամեծ թերութիւնները, կ'արժէ որ նոր հրատարակութիւն մը կատարուի մեր Թ. 32 Զեռագրին համաձայն, յատուկ անուններու ցանկով և անհրաժեշտ ծանօթութիւններով:

Աւելորդ չենք նկատեր արձանագրել հոս բնագրական մէկ երկու նկատողութիւններ և շարք մը սրբագրութիւններ, զարմանելու համար ոմանք այն սխալներէն, որոնք հրատարակիչներուն կամքէն անկատարար անշուշտ՝ տեղ գտած են Թաթարաց Պատմութեան հայերէն բնագրին և հետեւաբար նաեւ մասամբ անգլիերէն թարգմանութեան մէջ:

Ա. — Երեւանացի Թարգմանչապետներ. — Մեր Թ. 32 Զեռագրիւր լման կը թուէ 13 գլխաւորներու անունները, այսպէս.

1. — Սոնիթայ,
2. — Միւս այլ Փոքր Զաղատայ,
3. — Բաշու Նուին,
4. — Ասար Նուին,
5. — Խոթթու Նուին,
6. — Թութտու Նուին,
7. — Աւգաթայ Նուին,
8. — Խաչխայ Նուին,
9. — Խոջայ Նուին,
10. — Խոսուսի Նուին,
11. — Խոնու Նուին,
12. — Թենալ Նուին,
13. — Անգուրագ Նուին:

Ասանցմէ թիւ 8, Խաչխայ Նուին, կը պակսի թէ՛ մեր Թ. 960 Զեռագրին և թէ՛ տպագրեալ երեք հրատարակութեանց մէջ ալ: Թիւ 12, Թենալ Նուին, կը պակսի մեր Թ. 960 Զեռագրին և Պետերբուրգի տպագրութեան մէջ: Վերջինը, թ. 13, Անգուրագ Նուին, նոյնպէս կը պակսի Պետերբուրգի տպագրութեան մէջ:

Բ. — Վարդանի և Կիրակոսի Մանր. — Պետերբուրգի տպագրութեան մէջ (էջ 52) տեսնուող Վարդան և Կիրակոս Վարդապետներու մահուան յիշատակութիւնը պէտք էր գտնուէր նաեւ երուսաղիմեան տպագրութեան մէջ, էջ 68, ինչպէս զիտած է Հ. Ղ. Յովնանեան: Արդարեւ մեր երկու ձեռագիրներն ալ ունին այդ տողերը, Թ. 32 լուսանցքի վրայ շուրջանակի, իսկ Թ. 960 բնագրին մէջ:

Գ. — Սրբազնի կէսեր ամերիկեան Տրպագրութեան մէջ. —

էջ 18, տող 38. — Բորամիճք, Զեռ. Թ. 32 ունի Բորամիճք:

էջ 20, տող 49. — Երեսուն և երեք, Զեռ. ԽԳ [= Քառասուն և երեք]:

էջ 24, տող 17. — որ հանապաղ հակառակ է: Ընդգծեալը պէտք է աւելցնել ըստ Զեռագրին: Նոյնպէս հետեւեալներուն մէջ ալ:

էջ 24, տող 19, 24, և այլն. — Իւվանէ, Զեռ. Թ. 32 և 960 միշտ ունին Իւանէ:

էջ 26, տող 55. — մոռնծ, Զեռ. Թ. 32 մոռուգ:

էջ 26, տող 60. — պեւեքի, Զեռ. պեռեքի:

էջ 28, տող 78. — իւրեանց, Զեռ. իւրովք:

էջ 29, տող 72. — Read. «and ransomed the vardapet with his disciples».

էջ 32, տող 46. — Ղփչուր, Զեռ. Ղըփչուր:

էջ 34, տող 74. — աւերեալ, Զեռ. աւերել էին:

էջ 38, տող 7. — աւերելով, Զեռ. աւարելով:

էջ 42, տող 50. — փախուցեալ, Զեռ. փախեալ:

էջ 44, տող 13. — զՍային Ղանն զի եր Ղանն այն:

էջ 48, տող 14-15, 30-31. — Բաշոյն, Բաշու:

էջ 48, տող 30. — ուրախացան ամե-
նայն իշխանքն:

էջ 50, տող 18. — ալազգացն, ալ-
լազգեացն:

էջ 68, տող 14. — կացցուք, Ձեռ. կե-
նանք:

էջ 70, տող 46. — ի մէջ Ալի ծովուն:
Անգլերէնը ճիշդ է:

էջ 74, տող 96. — գոճեմայր, գոճե-
մայր:

էջ 76, տող 110. — դաւեր տեղիսն եւ
զգեղարեան շինել:

էջ 76, տող 123. — ոք, Ձեռ. քո:

էջ 78, տող 158. — միմեանց, Ձեռ.
մէկ մէկի:

էջ 82, տող 47. — եւ ապա վարձեալ
պակասեաց:

էջ 86, տող 32. — անտի, Ձեռ. 32
սոյնաւոր, Ձեռ. 960 անտի, այսինքն 'սահ-
մանի:

էջ 90, տող 86. — Ստայն փայտ, Ձեռ.
960 Սրտայն փայտ, Ձեռ. 32 Ստայն փայտ,
հաւանարար՝ նափտ, naphte: Հմտ. վար-
դան, վենետիկ. էջ 132, նֆատ:

էջ 98, տող 231. — եւ, եւ, Ձեռ. 32
ու, ու:

էջ 100, տող 236. — էր, էիր:

էջ 100, տող 236. — Թող քէ չէն գիւղ:
Շէն՝ ինչո՞ւ uninhabited, ճիշդ հակասակը:

էջ 100, տող 7. — լուաւ, Ձեռ. 32
լսեաց:

էջ 100, տող 11. — էի գալ. եթէ գնա,
Ձեռ. 32 է ի գալ. որ գնա:

էջ 102, տող 25. — քերաւ, Ձեռ. քե-
րաք:

էջ 102, տող 36-7. — հայրապետ, հաւ-
տապետ:

էջ 104, տող 62. — արժանացուցէ
զինոյն նորա:

էջ 105, տող 56. — him, his soul.

էջ 40, տող 16. — Ռուբինեաց, Ռու-
բինեանց:

Ն. ԵՊՍ. ՇՈՎԱԿԱՆ



ՄԻՋ-ԵԿԵՂԵՅԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ

ԵԻ

ԵԿԵՂԵՅԵԱՅ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ(*)

Պատմականօրէն խօսելով, կրնանք ըսել
թէ Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուր-
դին նախաձեռնութեամբ գումարուող Եկե-
ղեցեաց համաժողովներու մերօրեայ շար-
ժումը շատ կարեւոր շարժում մըն է Եկե-
ղեցւոյ պատմութեան այս ժամանակաշրջ-
անին: Իւրաքանչիւր քրիստոնեայ որ կը
հետաքրքրուի իր Տիրոջմով, որ 'կը գործէ
յաւիտենապէս, պէտք է սերտէ այն գոր-
ծերը՝ որոնք կը կատարուին Իր փառքին
համար մեր օրերուն:

Այս յոգեւածին համար իմ խորագիրս
քիչ մը չփոխեցուցիչ է. ըսինք Քրիստոս
և Եկեղեցեաց Համաշխարհային Խորհուրդը.
այս խորագիրը աւելի ևս պէտք է պար-
զել: Յստակացնելու համար երկու կարեւ-
րութիւններ կան: Կրնայ նշանակել թէ
Քրիստոս ի՞նչ կը մտածէ, ինչպէ՞ս կը դա-
տէ Ե. Հ. Խ. Ը: Կրնայ նշանակել նաեւ
թէ Ե. Հ. Խ. Ը ի՞նչ կ'ուսուցանէ Քրիստոսի
մասին և ի՞նչպէս կը ներկայացնէ զԱյն:
Այս երկրորդ իմաստով ընտրած ենք վերի
խորագիրը: Մեր նպատակը ուրիշն պիտի
ըլլայ ուսումնասիրել զանկու համար թէ
ինչպէս Ե. Հ. Խ. Ը Տէր Քրիստոսը և Իր Ս.
Հոգին կը ներկայացնէ մեր օրերուն: Մեր
սերտութիւն և խորհրդածութեան առանցքը
Քրիստոս և Ե. Հ. Խ. Ը պիտի ըլլայ հետեւ-
ւորաբար:

Առաջին հարցումը որ կը ծագի մեր
մտքին մէջ այն է թէ Ե. Հ. Խ. Ը կը ներ-
կայացնէ՞ Տէր Յիսուս Քրիստոսը: Եթէ ո-
մանք ըսեն թէ այս Խորհուրդը Քրիստոսի
մասին որեւէ ուրոյն վարդապետութիւն չու-
նի, այնուհանդերձ Ե. Հ. Խ. Ը ինքզինքը

(*) Այս յոդուածը հառ. մըն է՝ արտասանուած Վ.
Տիմի Եկեղեցականին կողմէ, Քրիստոնէական Եկեղեց-
եաց Միջազգային ժողովի ընթացքին՝ որ տեղի ունե-
ցաւ անցեալ տարի ի Պրագայի: Թարգմանաբար կը
ներկայացնենք զայն **Սիոնի** մեր ընթերցողներուն, յիշ-
եալ շարժումի մասին այս յոդուածին շահեկանու-
թեան համար: